3

Քաղաքապետը մարդ է փրկել

5

Ավտոմոբիլային վթար

6

Ինչպե՞ս հաղթահարել վիշտը

7

Թունավոր ամպը

ԱԻՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF RA

ով իրազեկված է, նա զգաստացված է

արտակարգ թերթ

N 15 (432) 27.4.2012 - 3.5.2012 www.emergency.am

Արմեն Երիցյան. «Երկու տարուց մենք կունենանք Եվրոպայի լավագույն ՃԿԿ-ներից մեկը»

ԱԻՆ-ի նախաձեռնությամբ անցյալ տարվա դեկտեմբերից Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության աջակցությամբ սկիզբ է դրվել ԱԻՆ Ճգնաժամային կառավարման կենտրոնի եւ մարդուն հրատապ օգնություն ցուցաբերող 911 ծառայության զարգացման ծրագրին:

Մարտի 14-ին Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը եւ Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Ռուդոլֆ Շոխը ստորագրեցին համաձայնագիր՝ «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման կենտրոնին (ՃԿԿ) խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու» ծրագրի վերաբերյալ:

Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել աղետների ռիսկերի նվազեցման բնագավառում Հայաստանի կարողությունները՝ ԱԻՆ ՃԿԿ-ի գործունեության բարելավման շնորհիվ:

Ապրիլի 26-ին ծրագրի փորձագետներն Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանին եւ ՇԶՀԳ տարածաշրջանային տնօրենի տեղակալ Մատիաս Վայնգարթին ներկայացրեցին մինչ այսօր իրականացված աշխատանքները եւ հետագա անելիքները:

ԱԻՆ աշխատանքային խմբի հետ համատեղ գործունեության արդյունքում ուսումնասիրվել է առկա իրավիճակը, ի հայտ են բերվել կարիքները եւ մշակվել բարելավման առաջարկներ: ԱԻ նախարարի հաստատմանը ներկայացվեց համատեղ մշակված աշխատանքային պլանը: Արդեն չորս ամիս Հայաստանում աշխատող միջազգային փորձագետներն իրենց առաջարկներն են ներկայացրել ԱԻՆ նորակառույց շենքի, այնտեղ տեղակայվող Ճգնաժամային կառավարման կենտրոնի տեխնիկական եւ ծրագրային հագեցվածության վերաբերյալ:

Ծրագրի շրջանակներում ԱԻՆ պատվիրակությունն այցելել է Ավստրիայի Ճգնաժամային կառավարման կենտրոն եւ 122 ծառայություն, ծանոթացել դրանց կառուցվածքին, աշխատանքային պայմաններին, կիրառվող ծրագրերին եւ տեղեկատվական բազաներին: ԱԻՆ ներկայացուցիչները մասնակցել են նաեւ Ռիգայում տեղի ունեցած եվրոպական 112 ասոցիացիայի կոնֆերանսին, որտեղ պայմանավորվածություն է ձեռք բերվել ասոցիացիային ՀՀ ԱԻՆ-ի անդամակցության եւ համագործակցության վերաբերյալ:

ՇԶՀԳ-ի հետ իրականացվող ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաեւ հրավիրել ուսումնական եւ վերապատրաստման հարցերով փորձագետի, որն ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի մասնագետների հետ համատեղ կմշակի ուսումնական ծրագիր՝ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման կենտրոնի եւ 911 ծառայության աշխատակիցների ուսուցման եւ վերապատրաստման համար:

Շարունակվում են ԱԻ նախարարի մարզային այցելությունները

Ապրիլի 20-ին Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանն ԱԻՆ ղեկավար կազմի ներկայացուցիչների ուղեկցությամբ աշխատանքային այցով գտնվում էր Արագածոտնի մարզում:

Այցի ընթացքում ԱԻ նախարարը եղավ ԱԻՆ մի շարք ծառայությունների մարզային ստորաբաժանումներում՝ Աշտարակի, Ապարանի, Թալինի եւ Արագածի հրշեջ-փրկարարական ջոկատներ, մարզային փրկարարական վարչություն եւ ջոկատ, Հայպետհիդրոմետի դիտակետեր եւ օդերեւութաբանական կայան, Ապարանի ջրամբար:

Արմեն Երիցյանը տեղում ծանոթացավ մարզային ստորաբաժանումների առկա խնդիրներին ու աշխատանքային պայմաններին:

Ծառայությունների ղեկավարներին հանձնարարվեց խստացնել անձնակազմի կարգապահությունը, իրականացնել տարածքների ու գույքի ամբողջական հաշվառում, կարգի բերել տարածքներն ու բարեկարգել ստորաբաժանումների շենքային պայմանները:

ԱԻ նախարարը հանձնարարեց կատարել ուսումնասիրություններ եղած տարածքների նպատակային օգտագործման, վերանորոգման ու կառուցապատման վերաբերյալ:

Ապրիլի 23-ին Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանն աշխատանքային շրջայց կատարեց Լոռու մարզում:

Այցի ընթացքում ԱԻ նախարարն ու ԱԻՆ ղեկավար կազմի ներկայացուցիչները եղան ԱԻՆ մի շարք ծառայությունների մարզային ստորաբաժանումներում, այդ թվում՝ մարզի հրշեջ-փրկարարական ջոկատներ, մարզային փրկարարական վարչություն եւ ջոկատ, Հիդրոմետ եւ սեյսմիկ ծառայությունների դիտակետեր, Դսեղի հակակարկտային կայան, Ճգնաժամային կառավարման ակադեմիայի Ստեփանավանի քոլեջ, «Լոռէ» փրկարարական ջոկատ:

Նախարարը, ծանոթանալով առկա խնդիրներին եւ աշխատանքային պայմաններին, հանձնարարականներ տվեց՝ կապված ստորաբաժանումների տարածքների ու շենքերի բարեկարգման եւ կառուցապատման, դրանց նպատակային օգտագործման, ինչպես նաեւ անձնակազմի կարգապահության հետ:

Ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարման եւ հրշեջ-փրկարարական ջոկատների աշխատանքները բարձր մակարդակով կազմակերպելու համար նախարար Երիցյանը հանձնարարեց խրախուսման ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչության

պետ, փ/ծ գնդապետ Հրաչ Անտոնյանին, Սպիտակի ՀՓՋ հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Սերոբ Գաբրիելյանին, Տաշիրի ՀՓՋ հրամանատար, փ/ծ փոխգնդապետ Գառնիկ Գալստյանին եւ Ստեփանավանի ՀՓՋ հրամանատար, փ/ծ մայոր Արայիկ Ասատրյանին:

Ապրիլի 25-ին ԱԻ նախարար Արմեն Երիցյանն աշխատանքային այցով գտնվում էր Տավուշի մարզում:

Շրջայցի ընթացքում ԱԻ նախարարն ու ԱԻՆ ղեկավար կազմի ներկայացուցիչները եղան նախարարության մի շարք ծառայությունների մարզային ստորաբաժանումներում՝ մարզի հրշեջ-փրկարարական ջոկատներ, մարզային փրկարարական վարչություն եւ ջոկատ, ՍՊԱԾ գործակալության եւ Հիդրոմետ ծառայության դիտակետեր, պահեստներ, հրդեհային տեսչության եւ տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի մարզային ստորաբաժանումներ:

ԱԻ նախարարն այցելեց նաեւ Արծվաբերդում նոր հրշեջ հենակետի ստեղծման համար նախատեսված տարածք:

Նախարար Երիցյանը տեղում ծանոթացավ նախարարության տարածքային ստորաբաժանումների առկա խնդիրներին ու աշխատանքային պայմաններին եւ համապատասխան հանձնարարականներ տվեց ծառայությունների ղեկավարներին:

Պայթյուն «Արմենիան մոլիբդեն պրոդաքշն» ՍՊԸ-ում



Ապրիլի 23-ին տեղեկություն է ստացվել, որ ժամը 05.30-ի սահմաններում «Արմենիան մոլիբդեն պրոդաքշն» ՍՊԸ-ի տարածքում տեղի է ունեցել պայթյուն, որի հետեւանքով տարբեր աստիճանի այրվածքներով «Արմենիա» բժշկական կենտրոնի այրվածքների կենտրոն են տեղափոխվել 1985 թ. ծնված Ռոբերտ Հարությունյանը, 1989 թ. ծնված Արմեն Կարապետյանը, 1987 թ. ծնված Վարազդատ Հակոբյանը, 1977 թ. ծնված Մելիք Կարապետյանը, 1959 թ. ծնված Արսեն Մուրադյանը, 1984 թ. ծնված Աշոտ Սուլուկյանը, 1954 թ. ծնված Սեւադա Մեսրոպյանը եւ 1973 թ. ծնված Հարություն Սահակյանը:

Տեղում պարզվել է, որ Ֆերոմոլիբդենի արտադրության արտադրամասի խառնիչում տեղի է ունեցել պայթյուն, ինչի հետեւանքով փլուզվել է արտադրամասի պատը (մոտ 4 քմ), կարճ միացումից այրվել է մոտ 4 գմ մալուխ, որը մարվել է տեղի ուժերով:

ԱԻՆ

միացյալ հեռախոսահամարն է

911

Մենակ եւ անօգնական

Ապրիլի 23-ին, 20.43-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Խորենացի փողոցի թիվ 47 շենքի 118-րդ բնակարանի բնակիչը չի արձագանքում հեռախոսազանգերին եւ դռան թակոցներին. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր են մեկնել ՃԿԿ օպերատիվ եւ հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խմբերը:

Փրկարարները բացել են բնակարանի դուռը եւ անօգնական վիճակում հայտնաբերել 1932 թ. ծնված Արեւիկ Պետրոսյանին, որի առողջական վիճակը շտապօգնության բժիշկները գնահատել են ծայրահեղ ծանր:

Հայտնաբերվել է դի

Ապրիլի 25-ին, ժամը 17.40-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Կիեւյան կամրջի տակ՝ ավտոճանապարհին, ասֆալտին ընկած մարդ է նկատվում:

Դեպքի վայր է մեկնել ՃԿԿ օպերատիվ խումբը: Պարզվել է, որ Կիեւյան կամրջից ներքեւ է նետվել Երեւանի Ա. Բաբաջանյան փողոցի թիվ 163 շենքի 31 տան բնակիչ՝ 1995 թ. ծնված Ալմաստ Մհոյանը, որը ստացված վնասվածքներից տեղում մահացել է:

Վտանգը չեզոքացված է

Ապրիլի 20-ին, ժամը 13.50-ին տեղեկություն է ստացվել, որ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Շահումյան փողոցի 15 շենքի 3-րդ մուտքի անձրեւատարն ուժեղ քամուց վնասվել է եւ վտանգ է ներկայացնում անցորդների համար. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Փրկարարներն ամրացրել են պոկված եւ թուլացած անձրեւատար խողովակաշարը՝ չեզոքացնելով վտանգը:

Ավտոպատահար Կապան-Ճակատեն ավտոճանապարհին

Ապրիլի 24-ին, ժամը 01.10-ին տեղեկություն է ստացվել, որ Սյունիքի մարզի Կապան - Ճակատեն ավտոճանապարհի 8-րդ կմ-ում տեղի է ունեցել ավտոպատահար, կան տուժածներ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարակն ջոկատը:

Դեռեւս չբացահայտված հանգամանքներում «Ֆոլքսվագեն Գոլֆ» մակնիշի 18 US 984 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ շրջվել հարակից ձորակը:

Փրկարարներն ավտոմեքենայից դուրս են բերել վարորդ՝ 1979 թ. ծնված Վ. Առաքելյանին, որը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

Ավտոպատահար Վեդի-Դաշտաքար ավտոճանապարհին

Ապրիլի 23-ին, ժամը 17.05-ին տեղեկություն է ստացվել, որ Արարատի մարզի Վեդի-Դաշտաքար ավտոճանապարհին տեղի է ունեցել ավտոճանապարհ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «ՈՒԱԶ-31519» մակնիշի 26 LO 213 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ բախվել ճամփեզրյա արգելապատնեշին՝ վնասելով գազատար խողովակի հենասյունը:

Մինչեւ հրշեջ-փրկարարների դեպքի վայր հասնելը՝ վարորդ, 1991 թ. ծնված Վարազդատ Ալոյանը եւ ուղեւոր՝ 1993 թ. ծնված Ռուբիկ Ասատրյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Վեդիի հիվանդանոց: Բժիշկները տուժածների առողջական վիճակը գնահատել են բավարար:

Բախվել է երկու ավտոմեքենա

Ապրիլի 29-ին, ժամը 19.13-ին ահազանգ է ստացվել, որ Գավառ - Մարտունի ավտոճանապարհի 12-րդ կմ-ում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, կան տուժածներ. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը: Պարզվել է, որ դեռեւս չբացահայտված հանգամանքներում բախվել են «Կամազ» մակնիշի պետհամարանիշը չպարզված եւ «ՎԱԶ-2121» մակնիշի 02 LU 999 պետհամարանիշով ավտոմեքենաները:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը՝ «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենայի վարորդ՝ 1961 թ. ծնված Գագիկ Շահրիկյանը եւ ուղեւոր՝ 1978 թ. ծնված Գեւորգ Շահրիկյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Գավառ քաղաքի կենտրոնական հիվանդանոց:

>>>

Պակիստանում ավիավթարի զոհ է դարձել 118 մարդ

Ապրիլի 20-ին Պակիստանի մայրաքաղաք Իսլամաբադի մոտակայքում մարդատար «Բոինգ 737» ինքնաթիռի վթարի հետեւանքով 118 մարդ է զոհվել: Ընդհանուր առմամբ, «Bhoja Airline» ավիաընկերությանը պատկանող ինքնաթիռում գտնվել է 127 ուղեւոր, այդ թվում նաեւ՝ 11 երեխա: Չվերթն իրականացվել է Կարաչի - Իսլամաբադ ուղղությամբ: Ինքնաթիռը վթարվել է, երբ փորձել է վայրէջք կատարել Իսլամաբադի միջազգային օդանավակայանում:

Այն ընկել է Պակիստանի մայրաքաղաք Իսլամաբադի մոտ տեղակայված Չակլալա ավիաբազայի մոտակայքում:

Նախնական վարկածով, վթարի պատճառ է հանդիսացել վատ տեսանելիությունը: Ականատեսների վկայությամբ՝ վթարից հետո ինքնաթիռն ամբողջությամբ հրդեհվել է:

Տարածքում տեղացող հորդառատ անձրեւները դժվարացրել են փրկարարական աշխատանքները:

Խոշոր պայթյուն Նորվեգիայում

Ապրիլի 23-ին Նորվեգիայի կաթնամթերքի գործարանում տեղի է ունեցել խոշոր պայթյուն: Պատահարի հետեւանքով մեկ մարդ զոհվել է, երեքը՝ վիրավորվել, իսկ հինգը համարվում են անհետ կորած:

Արտակարգ պատահարը տեղի է ունեցել Ֆրեդրիկստադ քաղաքում: Ըստ նախնական տվյալների՝ «Mills Factories» կաթնամթերքի արտադրամասում գազի ցիստերն է պայթել: Ոստիկանությունում հայտնել են, որ երեք տուժածները տեղափոխվել են հիվանդանոց, իսկ անհետ կորածների որոնողական աշխատանքները շարունակվում են: Հնարավոր է, որ վերջիններս մնացած լինեն փլատակներում:

Արտադրամասի ղեկավարը հայտնել է, որ շրջանում, որտեղ տեղի է ունեցել պայթյուն, գազատար է եղել: Վառելիքի բեռնաթափումից անմիջապես հետո ինչ-որ բան պայթյունի պատճառ է հանդիսացել:

Նորվեգիայի ոստիկանության տվյալներով, պայթյունի ալիքը այնքան հզոր է եղել, որ մերձակա շինությունների պատուհանները կոտրվել են, հրդեհ է բռնկվել: Գործարանի տարածքը շրջափակման մեջ է առնվել:

Հրդեհ Սիբիրի գյուղերում

Ապրիլի 20-ին Սիբիրի երկու գյուղերում միաժամանակ հրդեհ է բռնկվել: Վերջին շաբաթվա ընթացքում Սիբիրում չեն դադարում նաեւ անտառային հրդեհները, ինչն արդեն կառավարության մտահոգության պատճառն է դարձել:

Ինչպես հայտնում են տեղի Արտակարգ իրավիճակների նախարարությունում՝ Ամուրյան շրջանի Տիգդա գյուղում արդեն այրվել է ավելի քան 75 տուն, որոնցից 65-ը ամբողջովին ոչնչացվել է: Կրակն առանց տանիքի է թողել 120 մարդու: Մեկ մարդ զոհվել է:

Հրդեհը բռնկվել է, երբ տեղի սղոցարանի աշխատակիցները որոշել են այրել խոտը: Ուժգին քամին, որի արագությունը հասնում էր 20 մ/վ-ի, կրակն արագորեն տարածել է դեպի տները, իսկ տեղի երկաթուղային կանգառում հրդեհվել են նավթատար տարաները: Ականատեսների խոսքերով՝ հրդեհը ամբողջովին 3 փողոց է ոչնչացրել: Կանգուն է մնացել միայն մեկ երկհարկանի տուն:

Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակիցներին հաջողվել է մեկուսացնել հրդեհը եւ կանխել հրդեհի տարածումը: Հարեւան բնակավայրերից տեղի հրշեջներին օգնության են հասել 12 մարտական հաշվարկ: Գյուղի 180 բնակիչ տարհանվել է:

Մուրադյան Անի

արագ արձագանքման ծառայություններ

>>> Բժիշկները Գագիկ Շահրիկյանի առողջական վիճակը գնահատել են ծանր, իսկ Գեւորգ Շահրիկյանինը՝ միջին ծանրության:

Ավտոմեքենան գլորվել է ձորակը

Ապրիլի 21-ին, ժամը 23.29-ին ահազանգ է ստացվել, որ Սպիտակ-Երեւան ավտոճանապարհի 8-րդ կմ-ում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար. ավտոմեքենան շրջվել ձորակը, կա տուժած:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «Օպել-Վեկտրա» մակնիշի (առանց պետհամարանիշի) ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ գլորվել ձորակը: Մինչեւ հրշեջ-փրկարարների կանչի վայր հասնելը՝ տեղի ոժեռով ավտոմեքենայից դուրս է բերվել վարորդ Հ. Հակոբյանը: Տուժածը «1-03» ծառայության ավտոմեքենայով տեղափոխվել է Սպիտակ քաղաքի հիվանդանոց, որտեղ ստանալով անհրաժեշտ բուժօգնություն՝ դուրս է գրվել:

Ավտոպատահար մահվան ելքով

Ապրիլի 25-ին, ժամը 11.20-ին տեղեկություն է ստացվել, որ Նոյեմբերյան-Իջեւան ավտոճանապարհի 9-րդ կմ-ում՝ Ջուջեւան գյուղի մոտ, տեղի ունեցել ավտոպատահար, կա տուժած. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված հանգամանքներում «ՎԱԶ-2102» մակնիշի 29 SU 911 պետհամարանիշով ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ բախվել ճամփեզրի ժայռաբեկորին, ինչի հետեւանքով վարորդ՝ 1975 թ. ծնված Ս. Խաչիկյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Նոյեմբերյանի հիվանդանոց:

Բժիշկները տուժածի առողջական վիճակը գնահատել միջին ծանրության: Ձեւախախտված ավտոմեքենայում արգելափակված ուղեւորը՝ Նոյեմբերյանի ՀՓՁ-ի հրշեջ-փրկարար, փ/ծ ավագ սերժանտ՝ 1973 թ. ծնված Սմբատ Գուլքանյանը, մինչեւ հրշեջ-փրկարարների կողմից ավտոմեքենայից դուրս բերվելը, ստացված վնասվածքներից մահացել է:

Շաբաթվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 85 դեպք, որոնց գերակշիռ մասը տեղի է ունեցել խոտածածկ տարածքներում:

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. ապրիլի 19-ից 25-ը ՍՊԱԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չի գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցվել է 11 երկրաշարժ: Ապրիլի 19-ին Թուրքիայի Վան քաղաքից 24 կմ հյուսիս-արեւելք տեղի է ունեցել 6-7 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Նշված ժամանակահատվածում գրանցվել է 3-4 բալ ուժգնությամբ 4 սեյսմիկ իրադարձություն. ապրիլի 19-ին Թուրքիա-Իրան սահմանային գոտում՝ Դողուբայազետ քաղաքից 21 կմ հարավ-արեւմուտք, ապրիլի 20-ին՝ Վրաստանի Դմանիսի քաղաքից 25 կմ հարավ-արեւմուտք, ապրիլի 21-ին՝ Թուրքիա-Իրան սահմանային գոտում՝ Չալդրան քաղաքից 19 կմ արեւելք, եւ ապրիլի 22-ին՝ Թուրքիայի Սարայ քաղաքից 26 կմ հարավ-արեւմուտք: 3 բալանոց 6 երկրաշարժ է գրանցվել. ապրիլի 19-ին՝ Թուրքիայի Հորասան քաղաքից 18 կմ հարավ-արեւելք, ապրիլի 20-ին՝ Հայաստան-Ադրբեջան (Նախիջեւան) սահմանային գոտում՝ Քաջարան քաղաքից 15 կմ հյուսիս-արեւմուտք, Վրաստանի Դմանիսի քաղաքից 30 կմ հարավ-արեւմուտք եւ Ադրբեջանի Շամքոր քաղաքից 31 կմ հյուսիս-արեւելք, ապրիլի 24-ին՝ Թուրքիա-Իրան սահմանային գոտում՝ Չալդրան քաղաքից 12 կմ հյուսիս-արեւելք, եւ Իրանի Խոյ քաղաքից 12 կմ հարավ-արեւելք:

Տարածաշրջանից դուրս. ապրիլի 15-ին Ինդոնեզիայում Պապուա կղզու հյուսիսային ափամերձ տարածքում գրանցվել է 6.6 մագնիտուդով երկրաշարժ: Տուժածներ, ավերածություններ չկան:

ԱԻՆ ՍՊԱԾ գործակալություն

Քաղաքապետը, կյանքը վտանգելով, այրվող տնից մարդ է փրկել

Օրինակելի քաղաքացու վարք է ցուցաբերել ամերիկյան Նյու-Ջերսի նահանգի Նյուարք քաղաքի քաղաքապետ Քորի Բուքերը, որն այրվող տնից մի կնոջ է դուրս բերել:

Քաղաքապետը հինգշաբթի գիշերը տուն վերադառնալիս նկատել է, որ հարեւան տներից մեկը հրդեհվում է: Չսպասելով հրշեջների ժամանելուն՝ Բուքերը, իր երկու թիկնապահների հետ, այրվող տան բնակիչներին տարհանել է: Տան երկրորդ հարկից օգնության ճիչ լսելով՝ քաղաքապետը նետվել է կրակի մեջ եւ հրդեհի ճիրաններում հայտնված կնոջը փողոց է դուրս բերել, որտեղ արդեն սպասում էին փրկարարները:

Քաղաքի ղեկավարը նույնպես տուժել է եւ հիվանդանոց է տեղափոխվել ձեռքերի 2-րդ աստիճանի այրվածքներով եւ ածխաթթու գազից թունավորմամբ: Մի քանի ժամ անց Բուքերը դուրս է գրվել եւ առավոտյան անցել է իր ծառայողական պարտականությունների կատարմանը:

Փրկված կինը գտնվում է հիվանդանոցում, նրա վիճակը գնահատվում է կայուն:



Շներն էլ են ահազանգում

Խեղդահար շունը փրկեց իր կյանքը՝ զանգելով 999

Ջորջը՝ երկու տարեկան բասսետ տեսակի որսորդական շունը Սաութ Հայնդլիից, Արեւմտյան Յորքշիր, Մեծ Բրիտանիա, խեղդվում էր վզին փաթաթված հեռախոսային լարից եւ անհավատալիորեն փրկվեց՝ զանգելով 999 (911՝ բրիտանական նմանակը):

Նա վայր էր գցել ծանրակշիռ հնաոճ հեռախոսն իր տիրոջ՝ Սթիվ Բրաունի տանը եւ խճճվել հեռախոսային լարի մեջ, փաթաթելով այն իր պարանոցին: Խուճապահար, նա անհավանականորեն կարողացավ «հավաքել» 999 համարը՝ ազատվելու իր փորձերի ընթացքում թաթը դնելով հեռախոսի սկավառակին: Կանչն ընդունող օպերատորը խոսափողի մեջ լսելով ծանր հեւոցներ, ահազանգեց ոստիկանությանը:

Ոստիկանները, ժամանելով դեպքի վայր, պատրաստվում էին կոտրել մուտքի դուռը, երբ հարեւան Փոլ Ուոքերը, բանալին ձեռքին, վազելով դուրս եկավ իր տնից եւ բացեց դուռը: Չորս ոստիկան բաժանվելով երկու մասի՝ սկսեցին խուզարկել տունը, կարծելով, թե ինչ-որ մեկը ենթարկվել է հարձակման կամ գտնվում է անօգնական վիճակում, իսկ 41-ամյա Փոլը, մտնելով հյուրասենյակ, հայտնաբերեց այնտեղ ահաբեկված շնչասպառ Ջորջին՝ արձձե լարն ամուր փաթաթված վզին: Փոլն անմիջապես կտրեց լարը, ազատելով Ջորջին:

Երբ ոստիկանները մտան սենյակ եւ իմացան՝ ինչ է պատահել, ահագին զվարճացան: Նրանք ասացին Փոլին, որ դեպքի վայր են ժամանել 999 կանչի պատճառով, որի ընթացքում օպերատորը կարող էր նշմարել միայն ծանր հոգոցներ եւ հեւոցներ, կարծելով, թե ինչ-որ մեկը ուշագնաց է եղել կամ ենթարկվել է հարձակման:

Փոլին, Ջորջին կերակրելու համար, բանալին թողել էր տան տիրոջ աղջիկը՝ 18-ամյա ուսանողուհի Լիդիան, որն այդ օրը որպես մատուցողուհի աշխատում էր երեկոյան հերթափոխում:

«Երբ ես եկա տուն, ոստիկաններն արդեն գնացել էին, եւ Ջորջը մեղավոր դեմք էր ընդունել: Ի՞նչ բախտավորությունն էր, որ նրա թաթը հավաքեց 999, թե չէ նա կսատկեր: Մենք այդպես էլ չհասկացանք, թե ինչպես դա նրան հաջողվեց. Նա սովորաբար այնքան էլ խելացի չէ, իրականում բավական ալարկոտ է, եւ սիրում ծամել կիսագուլպաներ» - զարմացած ասում է Լիդիան:

Սակայն պատահածից հետո դժվար է նրա հետ համաձայնել:

Նկարում՝ երջանիկ հանգուցալուծում. Ջորջը «հավաքում է» արտակարգ իրավիճակների համարը:

Հայկ Հակոբյան
ԱԻՆ արտաքին կապերի վարչություն
Բրիտանական մամուլի էջերով

եղանակի տեսություն

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում ապրիլի 27-29-ը, մայիսի 1-ի գիշերվա առաջին կեսին եւ երեկոյան ժամերին շրջանների զգալի մասում, 30-ին՝ առավելապես հյուսիսային շրջաններում սպասվում է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, առանձին հատվածներում հնարավոր է կարկուտ: Քամին՝ հարավ-արեւելյան՝ 2-7 մ/վրկ, ամպրոպի ժամանակ՝ քամու ուժգնացում՝ 15-20 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը 29-30-ը կբարձրանա 1-3 աստիճանով:

Օդի ջերմաստիճանն ապրիլի 27-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ -1... +4, Տավուշում՝ +5... +10, Լոռիում՝ +4... +8, Արագածոտնի նախալեռներում՝ +7... +11, Արարատյան դաշտում՝ +9... +12, Սյունիքի հովիտներում՝ +8... +12, Սյունիքի նախալեռներում +6... +9, Արցախում՝ +8… +12 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանն ապրիլի 27-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ +12... +17, Տավուշում՝ +18... +23, Լոռիում՝ +14... +19, Արագածոտնի նախալեռներում՝ +19... +24, Արարատյան դաշտում՝ +23... +26, Սյունիքի հովիտներում՝ +20… +24, Սյունիքի նախալեռներում՝ +14… +17, Արցախում՝ +15… +20 աստիճանի սահմաններում:

Երեւանում ապրիլի 27-29-ը, մայիսի 1-ին գիշերվա առաջին կեսին եւ երեկոյան ժամերին հնարավոր է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ, ամպրոպի ժամանակ՝ քամու ուժգնացում՝ 13-18 մ/վրկ: 30-ին տեղումների հավանականությունը փոքր է:

Օդի ջերմաստիճանն ապրիլի 27-ին գիշերը կտատանվի +9… +11, ցերեկը՝ +23… +25 աստիճանի սահմաններում:

XXI դար. մարտահրավերներ եւ սպառնալիքներ

Մարդկությունը ոտք դրեց երրորդ հազարամյակ: Սահմանագծային ժամանակն առիթ է տալիս անցած իրադարձությունների իմաստավորման, ապագայի կանխատեսման, միտումների ու հեռանկարների վերլուծության ու վերհանման: Այս աշխատության դիտարկման առարկան է՝ ապագա սպառնալիքներն ու ոչ հեռու ապագայում մարդկային հանրության գոյության անվտանգության հիմքերը:

Սկիզբը՝ նախորդ համարներում

Տեխնոլոգիական հնարավորությունները, ներառյալ նաեւ ռոբոտները, որոնք կհայտնվեն անհիրավ ձեռքերում, կմեծացնեն կեղծված ապրանքների՝ առանց այդ էլ հսկայական զանգվածը: Սակայն հատկապես վտանգավոր են մարդու համար կենսական կարեւորություն ունեցող առարկաների ու գործընթացների՝ դժվար տարբերակելի կեղծումները - կեղծ դեղամիջոցներ ու բուժագործություններ, անվտանգության կեղծ համակարգեր ու միջոցներ, կեղծված սննդատեսակներ, սարքովի փաստաթղթեր եւ այլն:

21-րդ դարում նոր, անցանկալի ու լայն զարգացում կարող է ստանալ հետարդյունաբերական հասարակության կողմնակի ծնունդը՝ հակերությունը: Արդեն հիմա տեղեկատվական ճակատի այդ դիվերսանտները կարող են շարքից հանել համակարգիչը՝ նրա մեջ «համակարգչային բացիլ» ներարկելով, կորզել համակարգիչներում պահվող գաղտնիքները, բանկային հաշվից փող հանել, սասանել մի ամբողջ երկրի ֆինանսները:

Կանխատեսվում է, որ երեք տասնամյակ հետո նոր համակարգիչները միլիոն անգամ կգերազանցեն այսօրվանների հնարավորությունները: Նրանց հիմքի վրա հնարավոր կլինի ինքնակատարելագործվելու եւ իրենց նմաններին վերարտադրելու ունակ՝ «մտածող ռոբոտների» ստեղծումը: Նման օբյեկտների չարտոնագրված կառավարումը - ապագայի հակերությունը - առավել խոշոր վտանգներ կպարունակի: Մասնավորապես, չի կարելի բացառել ռոբոտների դուրս բերումը մարդկանց հսկողությունից կամ նրանց ինքնուրույն ելքը՝ ինքնակազմակերպման հետեւանքով: Այդ նույն ժամանակ էլ հակերները կարող են կաթվածահար անել օդային երթեւեկության ղեկավարման համակարգերը, խախտել ցամաքային ու ջրային տրանսպորտի կառավարումը, քայքայել էներգա- եւ ջրամատակարարման համակարգերը:

Այսպիսով կարելի է կանխատեսել, որ չարտոնագրված, չարանենգ մուտքը համակարգչային տեխնոլոգիաներ հսկայական սպառնալիքներ է պարունակում:

Սրա հետ կապված հարկ է ստեղծել հույժ հուսալի համակարգեր, որոնք համակարգչային ցանցերը կպաշտպանեն ոչ միայն օպերատորների սխալներից, այլեւ չարագործներից, ինչպես նաեւ սովորել բացահայտել ու կաթվածահար անել ուզածդ համակարգչային չարամիտի մտադրությունները:

Հարկավոր է հիշել, որ ապագայի համակարգիչը կկարողանա արդյունավետ հանձնարարականներ տալ մարդու գործարար եւ այլ գործունեության բարելավման ուղղությամբ, այդ թվում՝ բազում մարդկանց հաշվին հաջողություն կորզելու միջոցների մասին: Սակայն, քանի որ նման հնարավորությունների կտիրապետեն նաեւ համապատասխան հակառակորդները, ընդդիմախոսները, մրցակիցները, միջմարդկային հարաբերությունների կոշտ կարգավորում կպահանջվի, որպեսզի նախապես բացառվի համակարգչի հնարավորությունների լայնամասշտաբ չարաշահումը: Դա հարկ կլինի անել մոտավորապես այնպես, ինչպես հիմա ձգտում են բացառել զենքի չարաշահումը: Դրան հասնելու նպատակով հարկավոր է ապագայում ձեւավորել հատուկ տեխնոլոգիական էթիկա:

Հետարդյունաբերական հասարակության զարգացման հեռանկարների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրա ինչ-որ փուլում կսկսեն ջնջվել կենդանի էակների եւ մեքենաների միջեւ եղած սահմանները. այդ ժամանակների մարդիկ գաղափարների՝ գիտական ֆանտաստիկայի ոլորտից դեպի իրականություն անցման վկաները կդառնան:

Մասնավորապես, կանխատեսվում է նեյրոիմպլանտանտների առաջացումը. սրանք հնարավոր կդարձնեն անմիջականորեն ուղեղին տարբեր սարքավորումների միացումը՝ լրացուցիչ հիշողություն, կրթական ծրագրեր, սպեկտրի՝ մինչ այդ անտեսանելի հատվածները դիտելու միջոցներ եւ այլն: Դրանց օգնությամբ կհաջողվի գրեթե անսահմանորեն ընդլայնել աշխարհի ընկալումն ու նրա մասին գիտելիքները: Այնուհետեւ կարող է հայտնվել ֆիզիոլոգիական գործընթացները, հոգեբանությունն ու ինտելեկտը կարգավորելու հնարավորությունը: Այդ ամենը կբերի չտեսնված բարիքներ, սակայն, միաժամանակ, կծնի հսկայական վտանգներ, որոնք կսպառնան մարդու հոգեւոր կյանքին ու օրգանիզմին, կազդեն հասարակական արմատական հարաբերություններին, կձեւավորեն նոր արատներ:

Ամերիկյան գիտնական Բիլ Ջոյը, տեղեկատվական տեխնոլոգիաների ապագայի կանխատեսման գծով նախագահական հանձնաժողովի նախկին համանախագահը, հետարդյունաբերական հասարակության այդ ապագային հոռետեսորեն է նայում: Նա գտնում է, որ տեխնոլոգիաների անզուսպ

զարգացումն ու «գերխելոք» մեքենաների ստեղծումն այն չարիքն է, որը մարդկությանը սպառնում է կործանմամբ: Նրա խոսքով՝ այսօր այդ սպառնալիքը պակաս իրական չէ, քան այժմ գոյություն ունեցող միջուկային զենքը: Նա հաստատում է, որ մենք նոր դար ենք մտել առանց գործողությունների որեւէ ծրագրի, առանց իրավիճակը վերահսկելու եւ այն արգելակելու հնարավորություն չունենալով: Տեխնոլոգիաների զարգացումը սեփական հսկողության տակ առնելու վերջին հնարավորությունը սրընթաց մոտենում է: Բիլ Ջոյի կարծիքով, չափազանցում չի լինի ասելը, թե մենք գտնվում ենք մարդկության համար վտանգավորությունն իր ծայրահեղ կերպին հասցնելու շեմին, իսկ այդ վտանգի ներուժը գերազանցում է զանգվածային ոչնչացման զենքի սպառնալիքը:

Այսպիսով, գոյություն ունեցող սպառնալիքների կողքին, որոնք կապված են գլոբալ եւ այլ չլուծված հիմնախնդիրների հետ, քաղաքակրթության զարգացման դինամիկան պարունակում է մարտահրավերների մի ամբողջ շարք ապագայի մեջ: Թեպետ, շատ ֆուտուրոլոգներ կարծում են, որ մարդկությունը միշտ էլ գտել է ելքը, երբ գրեթե հասել է փակուղու:

Շարունակելի

Գազ. անվտանգություն, ժամանակի պահանջներ ու լուծումներ

Ներկայումս չի կարող չանհանգստացնել գազամատակարարման թե՛ կենցաղային, թե՛ արդյունաբերական, անվտանգությունը: Վերջին տարիների վիճակագրությունը վկայում է, որ վթարների թիվը չի նվազում: Անփութությունը եւ անվտանգության կանոնների չհետեւելը հազվադեպ չէ, որ հանգեցնում են ոչ միայն վթարների, այլեւ մարդկային զոհերի, նյութական կորուստների:

Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ համակարգերի ու սարքավորումների մեծ մասն սպառել է իր պաշարները: Տարիներով խախտվել են դրանց փոփոխման ու վերանորոգման ժամանակացույցները: Գազասպառողների կողմից գազօջախների, գազատաքացուցիչների շահագործման կանոններին խստագույնս հետեւելը վթարներից խուսափելու պլոֆիլակտիկա է: Ճիշտ ժամանակին բնակարանում, միջանցքում, բակում գազի արտահոսքին, նրա հոտին արձագանքելը թույլ կտա կանխարգելել ավելի ծանր հետեւանքները:

Ժամանակակից սարքավորումներից կարելի է նշել վթարների կանխարգելման անվտանգության համակարգերը, օրինակ, ազդանշանիչները, որոնք տեղադրվում են տներում:

Ազդանշանիչը նախատեսված է վառվող գազերի՝ մեթանի ածխածնի օքսիդի, ծավալային մասնաբաժնի, ինչպես նաեւ ազդանշանիչի շրջանում ջերմաստիճանի հաշվառման, անընդհատական հսկողության եւ ձայնային ու լուսային ազդանշանի համար:

Գազերի ծավալային բաժինների հաստատված շեմային նշանակությունների եւ ջերմաստիճանի գերազանցման ժամանակ ազդանշանիչն ալիք է տալիս զատիչ փականին:

Ազդանշանիչը նախատեսված է կենցաղային շինություններում շահագործման համար հետեւյալ պայմաններում. շրջակա օդի - 5-ից մինչեւ +55 ºC ջերմաստիճան, 86…106 մմ սնդիկի սյուն մթնոլորտային ճնշում եւ մինչեւ 80 տոկոս հարաբերական խոնավություն:

Զատիչ փականով ազդանշանիչի կիրառումը թույլ է տալիս ստեղծել բնակարանի, առանձնատան կամ այլ գազօգտագործող օբյեկտի առանձին անվտանգության համակարգ:

Սարքի մեջ կա «սեւ արկղ», որն իրականացնում է ազդանշանիչի ինքնահսկողությունը:

Հոսանքի աղբյուրին միանալուց հետո թարթելով վառվում է կանաչ լուսադիոդը եւ, միաժամանակ, ձայնային ազդանշանն է հնչում, ինչը ցույց է տալիս, որ ազդանշանիչը պատրաստ է աշխատանքին:

Մոտավորապես 120 վայրկյան հետո ավարտվում է ազդանշանիչի տաքացումը, ընդ որում՝ լուսադիոդի թարթումն ու ձայնային ազդանշանը (զումեր) դադարում են, ինչը վկայում է աշխատանքային փուլ մտնելու մասին:

Վառվող գազերի հսկողության աշխատանքային ռեժիմի ժամանակ կանաչ լուսադիոդը վառվում է անընդհատ, ձայնային ազդանշանը բացակայում է, փականի միացման ազդանշան չի ստացվում:

Տագնապային ազդանշանի ռեժիմի ժամանակ սկզբում դանդաղ թարթում է կարմիր լուսադիոդը, ինչը ցույց է տալիս, որ ազդանշանը մտել է նախազգուշացման ռեժիմ: Այնուհետեւ, եթե գազի կոնցենտրացիան մեծանում է, 6 վայրկյան հետո կարմիր լուսադիոդն սկսում է թարթել ավելի հաճախ եւ զումերն արձակում է տագնապի ընդհատվող ազդանշան:

Ընդ որում՝ կարմիր լուսադիոդի թարթելու հաճախականությունը նշանակալիորեն ավելի բարձր է ածխածնի օքսիդի գերազանցման ժամանակ:

Եթե գազի արտահոսքի տեւողությունը գերազանցում է 10 վայրկյանը, ապա ազդանշանիչը զատիչ փականին համապատասխան ազդակ է տալիս:

Կոնցենտրացիայի մակարդակի՝ մինչեւ թույլատրելի աստիճանն իջնելուց հետո ազդանշանիչն ինքնաբերաբար վերադառնում է հսկողության ռեժիմին:

Ազդանշանիչի շուրջը միջավայրի ջերմաստիճանի՝ 70 ºC-ի գերազանցման դեպքում վառվում է կարմիր լուսադիոդը եւ հնչում է ընդհատական զումերը:

Եթե ջերմաստիճանային ներգործությունը տեւում է ավելի քան 10 վայրկյան, ապա աշխատում է զատիչ փականը եւ գազի փոխանցումը դադարում է: Ջերմաստիճանի իջեցման ժամանակ ազդանշանիչն ինքնաբերաբար անցնում է աշխատանքային ռեժիմին:

Ազդանշանիչի անսարքության դեպքում սկսում է թարթել նարնջագույն լուսադիոդը եւ, եթե անսարքությունը 10 վայրկյանի ընթացքում չի վերանում, միանում է անընդհատական զումերը, իսկ նարնջագույն լուսադիոդը վառվում է առանց թարթելու: Անսարքության վերացումից հետո ազդանշանիչը մտնում է հսկողության ռեժիմ:

«Ինքնահսկում» կոճակը սեղմելիս հերթով վառվում են կարմիր, կանաչ եւ նարնջագույն լուսադիոդները, զումերն արձակում է տագնապի ազդանշանը եւ, միաժամանակ, ստացած խթանից հետո գործում է զատիչ փականը:

Տվյալ թեսթն անցկացնելուց հետո անհրաժեշտ է զատիչ փականը բերել սկզբնական (աշխատանքային) վիճակին:

Ազդանշանիչի ծառայության ժամկետը մեծապես կախված է հետեւյալ պահանջների կատարումից:

Ազդանշանիչը եւ անվտանգության համակարգերն ամբողջությամբ օգտագործողները պետք է նախապես ծանոթացած լինեն աշխատանքի սկզբունքներին:

Բաժանորդները պարտավոր են անշեղորեն հետեւելու գազի տնտեսության Անվտանգության կանոնների պահանջներին:

Հարկավոր է զերծ մնալ ազդանշանիչի սնուցումը 220 Վ ցանցից ինքնակամ անջատելուց, քանի որ դա կարող է հանգեցնել ազդանշանիչի ժամանակից շուտ շարքից դուրս գալուն: Հարկավոր է ազդանշանիչը մաքուր պահել: Խորհուրդ չի տրվում այն մաքրել քիմիական խառնուրդներով, ավելի ճիշտ է թեթեւակի մաքրել խոնավ լաթով: Ցնդող նյութերը, ասենք՝ սպիրտը, կարող են կեղծ տագնապ առաջ բերել եւ անջատել գազի մատակարարումը:

Խորհուրդ է տրվում օդափոխել սենյակը:

Սենյակի՝ լուծույթների ու ներկերի օգտագործումով վերանորոգման ժամանակ անհրաժեշտ է ազդանշանիչն անջատել ցանցից:

Վթարային միացման ժամանակ անհրաժեշտ է անմիջապես օդափոխել սենյակը, չմիացնել էլեկտրասարքեր, վերացնել պատճառն ու միայն դրանից հետո զատիչ փականը բերել սկզբնական դիրքի:

Եւ այնուամենայնիվ, հիմք ընդունելով նույն վիճակագրությունը՝ խախտումների մեծ մասը տեղի է ունենում բնակարաններում ու տներում գազի անվտանգության համակարգերն անջատելու պատճառով:

Այնպես որ՝ միացրած պահեք անվտանգության համակարգը, եւ խստորեն հետեւեք անվտանգության կանոններին:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի եւ «էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի Հասարակայնության հետ կապերի ծառայություններ

Վարարումներ

Հայաստանում տարեկան գոյացող մոտ 7 մլն խմ ջրի շուրջ 60 տոկոսը հոսում է գարնանային ամիսներին:

Կախված բնակլիմայական պայմաններից՝ գարնանային վարարումները տեւում են միջինը 90 օր, երբեմն այդ գործընթացը ձգվում է մինչեւ 120-150 օր, իսկ ամենակարճը՝ 30-60 օր: Այս եղանակին վարարումները դիտարկվում են հիմնականում մարտ-հունիս ամիսներին:

Գետավարարում

Գետի ջրային ռեժիմի փուլ, որը տվյալ կլիմայական պայմաններում կրկնվում է ամեն տարի միեւնույն ժամանակ, առաջանում է ձնհալքի կամ ձյան ու սառցադաշտի համատեղ հալման հետեւանքով եւ բնութագրվում է առավելագույն ջրայնությամբ, հորդացած եւ տեւական ջրի մակարդակի բարձրացմամբ, տվյալ գետի բացարձակ առավելագույն ելքի 90 տոկոսից ավելիի դեպքում՝ աղետալի:

Ջրածածկում

Գետրավարարման ժամանակ տարածքների ծածկումն է ջրով:

Հեղեղում

Տարածքների ջրածածկումն է, որը կարող է առաջանալ հորդացման, գետավարարման, սառցակուտակման, սառցակապության, գետաբերանում ջրի ավելացման ժամանակ գետի ջրի բարձրացման հետեւանքով, ինչպես նաեւ ջրատեխնիկական կառույցների ճեղքման դեպքում:

Սելավ

Ավերիչ մեծ ուժ ունեցող սրընթաց հոսք է, որը բաղկացած է ջրի եւ փուխր բեկորային ապարների խառնուրդից, հանկարծակի առաջանում է ոչ մեծ լեռնային գետերի ավազաններում ուժգին անձրեւների կամ ձյան բուռն հալման, ինչպես նաեւ քարակարկառների եւ անցկալների ճեղքման հետեւանքով:

Հանրապետությունում հեղեղումների եւ սելավների առաջացմանը նպաստում են՝

1. ջրոլորտի վրա մարդու գործունեության ազդեցության ակտիվացումը,

2. պոտենցիալ վտանգավոր եւ անօտարելի տարածքներում արտադրական, տնտեսական եւ բնակելի օբյեկտների տեղադրումը եւ շահագործումը,

3. հեղեղումների կանխատեսման ելակետային տվյալների եւ մեթոդների ոչ բավարար ճշտությունը,

4. հեղեղատարների, սելավատարերի եւ հիդրոտեխնիկական կառուցվածքների ոչ բավարար տեխնիկական դրությունը,

5. կանխարգելիչ համալիր միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսավորման միջոցների անբավարարությունը:

Հեղեղումները հանրապետությանը հասցնում են ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի վնասներ:

Ուղղակի վնասներից են՝

1. բնակելի եւ արտադրական շենք-շինությունների, երկաթուղային եւ ավտոմոբիլային ճանապարհների, կամուրջների, էներգամատակարարման եւ կապի գծերի, ջրամատակարարման եւ գազամատակարարման խողովակաշարերի վնասումը կամ ավերումը,

2. գյուղատնտեսական բերքի եւ կենդանիների ոչնչացումը,

3. հումքի, կիսաֆաբրիկատների, վառելիքի, սննդամթերքի, կենդանակերի, պարարտանյութի, պատրաստի արտադրանքի քշումը, փչացումը եւ ոչնչացումը,

4. չհեղեղվող տարածքներ բնակչության եւ նյութական արժեքների տարահանման համար կատարված ծախսերը,

5. վթարավերականգնողական աշխատանքների եւ վերանորոգման համար կատարվող ծախսերը,

6. հողի բերքատու շերտի լվացումը եւ այլն:

Անուղղակի վնասներից են՝

1. սննդամթերքի, շինանյութի, կենդանակերի ձեռք բերման եւ տուժած շրջաններ տեղափոխման համար կատարված ծախսերը,

2. բնակչության կյանքի պայմանների վատթարացումը,

3. տարածքների ռացիոնալ օգտագործման անհնարինությունը,

4. վնասի փոխհատուցումը կամ պետական աջակցության ցուցաբերումը:

Հեղեղումների ժամանակ կարող են առաջանալ նաեւ խոցման երկրորդային գործոններ՝

1. հրդեհներ (էլեկտրական գծերի կամ մալուխների կտրման եւ կարճ միացման հետեւանքով)

2. շենքերի եւ շինությունների փլուզում (ջրի հոսքի անմիջական ազդեցությամբ եւ հիմքի լվացման հետեւանքով)

3. մարդկանց եւ գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններ (խմելու ջրի եւ սննդամթերքի աղտոտման հետեւանքով) եւ այլն:

Վերջին շրջանի ջրառատ տարիներից մասնագետներն առանձնացնում են 2004 ու 2007 թվականները: 2004 թվականին գարնանային հեղեղումներից ու սելավներից տուժեցին բոլոր մարզերը, հասցված վնասի չափը կազմեց մոտ 1.5 մլրդ դրամ, իսկ 2007-ին՝ 2.2 մլրդ:

Ավտոմոբիլային վթար

Հարյուրամյա պատերազմը, որը շարունակվում է մարդկանց ու մեքենաների միջեւ, ՄԱԿ-ի տվյալներով, տարեկան մոտավորապես հարյուր յոթանասուն հազար մարդկային կյանք է խլում: Ավտոդպրոցում յուրաքանչյուր վարորդի պատմում են, որ վթարը քիչ հավանական է այն վարորդի համար, որն առավել զգուշավոր է, ուշադիր, ունակ է կանխազգալու դեպքերի զարգացումը, կարողանում է խուսափել վթարային իրավիճակից ու վճռական գործողություններ է ձեռնարկում վտանգավոր պահերին: Նման վարորդը կարողանում է գտնել համապատասխան արագություն, որը հնարավորություն կտա ապահովել մեքենայի վերահսկողությունը:

Ըստ էության, մեզ մոտ ստացվում է «ողջ մնալու դպրոցի» գերազանցիկի կատարյալ նկարագիր: Բնականաբար, ծայրահեղ պահերին պահանջվում են տարբեր գիտելիքներ ու հմտություններ, սակայն, գրեթե միշտ՝ միանման մարդկային հատկանիշներ:

Վիճակագրությունը վթարների կարեւորագույն պատճառներից է համարում.

- ավտոճանապարհային երթեւեկության կանոնների տարբեր խախտումները.
- արագության ավելացումը.
- ոչ սթափ վիճակում մեքենա վարելը,
- վատ ճանապարհները (ընդ որում՝ դյուրասահ),
- մեքենայի անսարքությունը (առաջին հերթին՝ արգելակը, երկրորդ հերթին՝ ղեկակառավարումը, երրորդ՝ անիվները եւ անվադողերը),

Այս ցուցակը մեծ նորություն չէ վարորդների համար: Սակայն վթարների տխուր գաղտնիքը կայանում է նրանում, որ ինֆորմացիայի տեղին օգտագործումն է միայն ապահովում մեր անվտանգությունը: Օրինակ՝ գլխակալերը եւ անվտանգության գոտիները փոքրացնում են հնարավոր մահացության դեպքերը ճակատային հարվածների դեպքում երկու-երեք, իսկ մեքենայի շրջվելու դեպքում՝ հինգ անգամ: Վարորդը, առանց անվտանգության գոտու, նույնիսկ 20 կմ/ժ արագության դեպքում ընթանալիս, ինչոր արգելքի հարվածելու դեպքում, ամենայն հավանականությամբ, վնասվածք է ստանում: Դրան հավասարազոր է 50 կմ/ժ արագությամբ չորրորդ հարկից դեմքով դեպի ցած թռչելը:

Յուրաքանչյուր ճՈ-ի աշխատակից հաստատում է, որ անփութությունը, ինքնավստահությունը, անդաստիարակությունը, ինչպես նաեւ բնավորության այլ տհաճ գծեր՝ ճանապարհային երթեւեկության համար մահացու վտանգ են ներկայացնում: Եվ սա բացառիկ դեպք չէ: 1993 թ. Մոսկվայի՝ արտասահմանից ժամանած հյուրերից մեկն ասել է, որ քաղաքում մշտական աղետի զգացողություն կա. «Ես տեսա, թե ինչպես էին մեքենաներն անցնում կարմիր լույսի տակով»:

Ինչպե՞ս վարվել,
եթե վթարն անխուսափելի է

Ասում են, որ մեքենայի ղեկավարման հիմնական բարդությունն սկսվում է այն ժամանակ, երբ մեքենան գտնվում է օդում: Իսկ, երբ գոնե մեկ անիվը հպվում է գետնին, վարորդը ոչ միայն կարող է, այլեւ պարտավոր է ղեկավարել մեքենան: Ահա փորձառու վարորդների մի քանի խորհուրդներ.

- Վթարի դեպքում պետք է բոլոր մկանները ծայրաստիճան լարված լինեն:
- Նախքան կանգ առնելը չի կարելի թուլացնել մկանները:
- Մինչեւ մեքենայի կանգ առնելը չի կարելի այն լքել (դա լավ ստացվում է միայն ֆիլմերում): Քննությունը ցույց է տալիս, որ մեքենայում կենդանի մնալու հավանականությունը 10 անգամ ավելի շատ է, քան դուրս նետվելու ժամանակ:
- Պահպանել ինքնատիրապետում՝ դա հնարավորություն կտա մինչեւ վերջին պահը ղեկավարել մեքենան:
- Անել ամեն ինչ հանդիպակաց հարվածից խուսափելու համար՝ ջրատար առու, ցանկապատ, թուփ, նույնիսկ ծառ կամ հանդիպակաց եկող մեքենա:
- Անշարժ առարկային հարվածելու դեպքում հարվածն աջ կամ ձախ թեւերից ավելի վտանգավոր է, քան ողջ ճակատային մասով, պետք չէ վախենալ, եթե շարժիչը մխրճվի ավտոսրահ՝ նախագծողները վաղուց մտահոգվել են, որ շարժիչն իջնի ցած:

Եթե հարվածն անխուսափելի է, ամենից կարեւորը մարմնի առաջ նետվելու խոչընդոտումն է եւ գլխի պաշտպանումը: Պետք է մեջքով ամուր սեղմվել նստարանին, լարել բոլոր մկանները, ձեռքերով հենվել ղեկանիվին: Այս տարբերակն այն մեքենաների համար է, որոնք ընթանում են ցածր արագությամբ: Եթե արագությունը գերազանցում է

60 կմ/ժ-ը, իսկ վարորդը չի ամրացրել անվտանգության ամրագոտիները, նա պետք է կրծքով սեղմվի ղեկանիվին: Բոլոր մկանները պետք է քարանան եւ լարված մնան՝ մինչեւ մեքենայի ընթացքի կանգ առնելը:

Ուղեւորը պետք է ձեռքերով փակի գլուխը եւ թեքվի կողքի, եթե կողքին երեխա կա, ապա, ամուր սեղմելով երեխային իրեն, ծածկի նրան եւ կրկին թեքվի: Ուղեւորների համար ամենավտանգավոր տեղն առջեւի նստարանն է, ուստի մինչեւ տասներկու տարեկան երեխաներին, ըստ ճանապարհային երթեւեկության կանոնների, առանց հստակ սարքավորման արգելվում է առաջին նստարանին նստեցնել:

Հարվածից հետո, առաջին հերթին պետք է կողմնորոշվել, թե մեքենայի, որ մասում եւ ինչ դիրքով ես գտնվում, չի հրկիզվում արդյոք մեքենան, արդյոք վառելանյութը չի արտահոսում (հատկապես մեքենայի շուռ գալու դեպքում): Ելնելով իրավիճակից՝ պետք է շարժվել դեպի ելք՝ կամ դռան, կամ պատուհանի կողմ: Եթե դռները չեն բացվում, ապա պետք չէ ժամանակ կորցնել, ճիշտ է ջարդելով լուսամուտը՝ դուրս սողոսկել (փորձառու վարորդների մոտ սարքահատիչը ձեռքի տակ է ցանկացած դեպքում):

Եթե մեքենան ընկել է ջուրը (ճիշտ է, նման վթարները հաճախակի պատահում են ֆիլմերում, քան կյանքում), ապա այն որոշակի ժամանակ լողում է ջրի վրա: Մի քանի վայրկյանն էլ բավական է մեքենայից դուրս թռչելու համար: Պետք չէ բացել դռները , քանի որ ջուրը անմիջապես կլցվի ներս եւ մեքենան կտրուկ կսուզվի: Պետք է դուրս սողոսկել բաց լուսամուտի միջոցով:

Մեքենայի սուզման ընթացքում սրահում օդը մի քանի րոպե է բավականացնում: Եվ դա էլ քիչ չէ: Պետք է միացնել լուսարձակները (որպեսզի մեքենային գտնելը հեշտ լինի), գնահատել իրավիճակը, ակտիվորեն օդափոխել թոքերը (խոր շնչումն ու արտաշնչումը թույլատրում են, որպեսզի արյունը լցվի թթվածնի «պաշարով»): Պետք է ազատվել ավելորդ հագուստից, արձակել փողկապը, մեքենայից վերցնել բոլոր փաստաթղթերը:

Եվ ամենագլխավորը՝ մտովի պատկերացնել ճանապարհը դեպի վեր: Հարկավոր է դուրս նետվել դռնով կամ պատուհանով (լավագույն տարբերակն է, որ դա կատարվի իջեցված ապակու միջոցով), ճեղքելանցնել դուրս, ձեռքերով կառչել մեքենայի ծածկից, ձգվել, այնուհետեւ կտրուկ լողալ դեպի վեր: Եթե մեքենայի դուռը խափանվել է եւ ապակին չի իջնում, պետք է անհապաղ ջարդել ճակատային պատուհանը՝ նախօրոք մտածելով, թե ինչով դա անել: Մեքենայից դուրս գալ հնարավոր է այն դեպքում, երբ մեքենան կիսով չափ է լցված ջրով: Եթե կտրուկ բացեք դուռը եւ աշխատեք դուրս գալ մեքենայից, ապա ձեզ կխանգարի ջրից սրահ լցվող հոսքը:

Մեքենայից դուրս գալուց հետո պետք է նկատի ունենալ, որ ունեք 30-40 վայրկյան: Դա լիովին բավարար է ջրի մակերեւույթին հասնելու համար: Ջրի 30 մետրից ավելի խորությունը համարվում է ամենավտանգավորը, սակայն նման խորության մեջ մեքենայի ընկղմվելը գործնականում անհնարին է:

Ինչպե՞ս հաղթահարել վիշտը

Ի՞նչ է կատարվում մարդու հետ, երբ նա կորցնում է իր մտերիմին: Այսօր մենք կփորձենք ներկայացնել մարդու հոգեվիճակն այդ ժամանակ եւ ինչպես օգնել նրան հաղթահարելու այն, ինչպես ընդունել այդ փաստը եւ շարունակել ապրել:

Վաղ թե ուշ մեզանից յուրաքանչյուրս հայտնվում ենք նման իրավիճակում, եւ հարազատին այդ պահին ճիշտ ճանապարհ ցույց տալը ձեր կողմից կլինի ամենամեծ օգնությունը:

Մի՛ շտապեք

Տարբեր մշակույթներում սգի եւ սգացող մարդու նկատմամբ վերաբերմունքը տարբեր է: Շատ մշակույթներում սգի մեջ գտնվող մարդը պետք է զուսպ լինի իր հույզերի դրսեւորման մեջ: Եւ շատ հաճախ մարդիկ չգիտեն, թե ինչպես արտահայտեն իրենց հույզերը, ինչն էլ ավելի է բարդացնում նրանց հոգեվիճակը: Սգի մեջ գտնվող մարդուն շրջապատողները պետք է քաջ գիտակցեն, որ սգալը եւ վիշտ ապրելը երկարատեւ պրոցես է եւ տվյալ անձը շատ արագ չի կարող հաղթահարել այդ վիճակը: Սակայն պետք չէ նաեւ այդ պրոցեսը երկարացնել, քանի որ դա հանգեցնում է մարդու հյուծմանը եւ ուժերի կորստին: Վիշտը պետք է հաղթահարել քայլ առ քայլ: Հոգեբանները նշում են, որ վշտի ապրման ամենադժվար շրջանը 6-7 շաբաթն է: Որից հետո մարդը նոր միայն սկսում է կամաց-կամաց վերադառնալ կյանքի նորմալ ընթացքին, այսինքն՝ դրանից շուտ պետք չէ նրանից համառորեն եւ ստիպողաբար «ապաքինում» սպասել: Նա պետք է ժամանակ ունենա այդ իրադարձությունը հուզականորեն ապրելու համար: Ուստի՝ մի՛ շտապեք:

Կյանքի եւ մահվան միջեւ

Մտերիմի կորցնելիս մարդը կարծես հայտնվում է կյանքի եւ մահվան միջեւ: Նա գտնվում է այնպիսի բարդ հոգեվիճակում, որ նրա համար դեռեւս անհավատալի եւ անընդունելի է տեղի ունեցածը: Նա չի կարողանում ընկալել, որ տեղի է ունեցել անդառնալի երեւույթ: Մարդն այդ ժամանակ կարծես թե բացակայում է ներկայից, գտնվում է բոլորովին այլ տարածության եւ ժամանակի մեջ: Նա չի լսում, չի զգում, ամեն ինչ անցնում է կողքով: Այստեղ շատ կարեւոր է, որ սգացող մարդը կարողանա տարանջատել իր ճակատագիրը մահացածի ճակատագրից, կարողանա առանձնացնել իրեն մահացողից, քանի որ հաղթահարել վիշտը եւ վերադառնալ կյանք չի նշանակում մոռանալ եւ թողնել այն մարդուն, ով մահացել է:

Կարողանալ արտահայտել վիշտը

Վշտի մեջ գտնվող մարդը շարունակում է նույն զգացումներն ունենալ մահացած մարդու նկատմամբ, ինչ կենդանության օրոք: Հաճախ՝ վշտի մեջ, մարդիկ մեղադրում են իրենց, որ բավարար չափով չեն սիրել կամ պաշտպանել տվյալ մարդուն: Այդ ժամանակ նրանք կարող են դառնել ագրեսիվ, անգիտակցաբար մեղադրեն մահացող մարդուն, որ իրեն մենակ է թողել ու լքել է: Շատ կարեւոր է թույլ տալ վշտի մեջ գտնվող մարդուն արտահայտել իր հույզերը, լաց լինել, հիշել, խոսել այդ մասին, մի խոսքով այն, ինչն ավելի կմեղմացնի նրա տանջանքը, ապրումները: Վիշտը պետք է ապրվի ամբողջությամբ, որպեսզի մարդը կարողանա վերադառնալ կյանք: Գրկելը, պարզապես ձեռքը սեղմելը, կողքին լինելը երբեմն բավական է լինում, որ մարդն իրեն հասկացված զգա: Եթե հարազատները գիտակցում են, որ ի վիճակի չեն լիարժեք օգնել եւ աջակցել վշտի մեջ գտնվող մարդուն, ապա կարելի է դիմել հոգեբանի:

Երկար ժամանակ հարազատներին կարող է թվալ, որ դրսում տեսնում են մահացած մարդուն, կամ դռան զանգը ստիպում է մտածել, որ նա է: Ժամանակ է անհրաժեշտ, որ մարդը համակերպվի փոփոխություններին: Հաճախ հարազատները, ընկերները չգիտեն, թե ինչ ասեն վշտի մեջ գտնվող մարդուն, սակայն պետք է գիտակցել, որ պարտադիր չէ ինչ-որ բան ասել, միայն նրան լսելը բավական է: Խուսափեք խորհուրդներ տալուց, քանի որ նրան դրանք այնքան էլ անհրաժեշտ չեն: Այստեղ կարեւոր է, որ անձն իրեն զգա հասկացված, որ կա մեկը, ում նա կարող է գրկել եւ լաց լինել, որ նա ապահով է նրա ձեռքերում եւ այլն:

Վիշտի հաղթահարման 5 փուլերը

Մերժում - «Դա ճիշտ չէ», «Դա հնարավոր չէ»: Մարդն ի վիճակի չէ հավատալու իրականությանը, նա բոլոր հնարավոր ձեւերով իրականությունը մերժում է, չի ընդունում:

Զայրույթ - «Ինչու հենց ինքը», «Դա արդարացի չէ»: Այս փուլում առաջանում է անասելի զայրույթ, չարություն այն մարդկանց նկատմամբ, ովքեր հայտնել են այդ լուրը:

Գործարք - «Ես չեմ անի այս կամ այն

բանը, միայն թե նա վերադառնա»: Ցանկություն է առաջանում վերադառնալու այն ժամանակը, երբ ամեն ինչ շատ լավ էր եւ փոխելու այդ չարաբաստիկ օրը:

Դեպրեսիա - «Ամեն ինչ կորած է», «Ոչինչ էլ նշանակություն չունի», «Ապրելու իմաստ չկա»: Այստեղ մարդուն պատում է անտարբերությունը կյանքի անիմաստության նկատմամբ, սրանից հետո ինչ լինելու է, թող լինի, միեւնույն է:

Ընդունում - «Ընդունում եմ, որ այդպես է եղել»: Այս փուլում , եթե ոչ բարձրաձայն, ապա ներքուստ, մարդն ընդունում է իրականությունն այնպիսին, ինչպիսին այն կա: Այս փուլին հասնելու ժամանակը տարբեր է, ոմանք շատ հեշտությամբ կարողանում են հաղթահարել վիշտը, ոմանց մոտ էլ այն ավելի երկար է ընթանում: Երբ մարդը հասնում է այս գիտակցմանը, ապա կարելի է համարել, որ նա արդեն սկսում է այլ կերպ գնահատել կյանքը, փորձում է իմաստավորել եւ նշանակալի դարձնել այն:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

Առողջ ապրելակերպի հիմունքները

«Երբ չկա առողջություն, իմաստնությունը լռում է, արվեստը չի կարող ծաղկել, հարստությունն անոթեսf է ու անզոr է բանականությունը»:

Հերոդոտոս

Դեռ 20-րդ դարի 40-ականներին «Առողջություն» հասկացությանը տալիս էին հետեւյալ բնորոշումները. «Առողջ է համարվում այն մարդը, ով առանձնանում է հորմոնալ զարգացածությամբ եւ լավ հարմարված է շրջակա ֆիզիկական եւ սոցիալական միջավայրին: Հիվանդությունների բացակայությունը դեռ առողջություն չէ, այլ պարզապես դրական մի բան, կյանքի կողմից տրվող պարտականությունների հաճույքով կատարում»: **(Գ. Սիգերիստ)**

Հիշեցնենք Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) ընդունած բնորոշումը. «Առողջությունը ֆիզիկական, հոգեկան եւ սոցիալական կատարյալ բարեկեցության վիճակ է, այլ ոչ միայն հիվանդությունների եւ ֆիզիկական թերությունների բացակայություն»:

Ապագան առողջապահությանն է

Գիտնականների մեծամասնության կարծիքով, մարդու առողջությունը 50 տոկոսով կախված է ապրելակերպից: Հետեւաբար, մեր առողջությունը եւ՛ առողջ ապրելակերպ է, եւ՛ բնակություն բարենպաստ միջավայր, եւ՛ նպատակահարմար սնունդ, եւ՛ արդյունավետ դեմոգրաֆիկ քաղաքականություն:

Պետք է ազատել մարդուն մի կտոր հացի համար ամենօրյա պայքարից: Եւ միայն այդժամ մենք կհասկանանք՝ ինչ է «կյանքի հոգեւոր բաղադրիչը», իրականում ինչպիսին է մարդը:

Իրոք, «Մարդը վեր է մարմնականից»... եթե նա կուշտ է: Մենք ներշնչում ենք մարդկանց այս նշանաբանը՝ մոռանալով միեւնույն նրանց կերակրել: Չէ՞ որ դեռ Հիսուս Քրիստոսն է ասել. «Անբարոյական է սոված-ներին ավետարան կարդալը»:

Ներկայումս հիվանդ տնտեսությամբ պետությունը չի կարող իր քաղաքացիների առողջության մասին հոգ տանել: Այդ պատ-

ճառով յուրաքանչյուր ոք պետք է իրազեկ լինի առողջության ձեւավորման, պահպանման եւ ամրապնդման հարցերում հիմնական ձեռքերումներին: Բժշկությունն այս ուղղություններում մեծ հաջողությունների է հասել՝ դարեր ի վեր զբաղվելով առողջության պահպանման եւ հիվանդությունների բուժման խնդիրներով: Բայց այսօր բժշկությունը միայն բուժում է հիվանդություններ, ոչ թե ժողովրդի մեջ ձեւավորում առողջության եւ առողջ ապրելակերպի դրույթներ:

Երբ տունն այրվում է՝ կրակը պետք է հանգցնել: Բժիշկները միայն «հրշեջ» են, ոչ թե «առողջության ճարտարապետ-շինարարներ»:

Առողջությունն ու դրա բաղադրիչները

Վերը նշված հատկանիշներից ակնհայտ է, որ առողջությունն արտաքին միջավայրին օրգանիզմի ընտելանալու հնարավորությունն է, մարդու եւ միջավայրի փոխազդեցության արդյունքը: Ակնհայտ է նաեւ, որ առողջությունը ձեւավորվում է արտածին (բնական եւ սոցիալական) եւ ներածին (ժառանգականություն, կառուցվածք, սեռ, տարիք) գործոնների փոխազդեցության արդյունքում:

Ներկայումս ընդունված է առանձնացնել առողջության մի քանի բաղադրիչ:

Մարմնական առողջություն՝ օրգանների ներկա վիճակը, մարդու օրգանների համակարգն ու դրանց կառուցվածքային եւ ֆունկցիոնալ ռեզերվների մակարդակը:

Հոգեկան առողջություն՝ մարդու հոգեվիճակ: Հոգեկան առողջության հիմքը հոգեկան ներդաշնակության ընդհանուր դրությունն է, որն ապահովում է վարվելաձեւի համապատասխան կարգավորումը: Այդ վիճակը պայմանավորված է ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալական բնույթի պահանջմունքներով եւ դրանց բավարարման հնարավորություններով: Բազային պահանջմունքների ճիշտ ձեւավորումն ու բավարարումը մարդու նորմալ հոգեկան առողջության հիմքն են:

Սեքսուալ առողջությունն ապրելակերպի մարմնական, զգացմունքային, ինտելեկտուալ եւ սոցիալական տեսանկյունից մարդուն դրականորեն հարստացնող, աշխատունակությունն ու սիրելու ընդունակությունը բարձրացնող համալիր է:

Բարոյական առողջությունը կապված է բարու, սիրո եւ գեղեցկության համամարդկային ճշմարտության հետ եւ հիմնականում որոշվում է մարդու հոգեւոր էությամբ, նրա գիտելիքներով ու դաստիարակությամբ, համամարդկային արժեքներին մարդու կենսակերպի համապատասխանությամբ:

Հնարավոր է առանձնացնել այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ սոցիալականը, վերարտադրողականը, պրոֆեսիոնալ առողջությունը եւ այլն:

Ուսումնասիրելով տեսակները՝ կարելի է ձեւակերպել առողջության չափանիշները. ֆիզիկական առողջություն՝ ես կարող եմ, հոգեկան առողջություն՝ ես ցանկանում եմ, բարոյական՝ ես պարտավոր եմ:

Առողջության մակարդակը

Առողջության՝ որպես բազմաբաղադրիչ երեւույթի, ճիշտ ընկալումն, իհարկե, կախված է մարդու ընդհանուր կրթությունից եւ գիտելիքներից: Դժբախտաբար, քանի դեռ ֆիզիկապես առողջ են, երիտասարդները չեն ձգտում պահպանել ու ամրապնդել առողջությունը, միայն հետո, կորցնելով այն, սկսում են զգալ դրա պահանջը: Այստեղ հարկավոր է նշել, որ յուրաքանչյուր կրթված մարդ պետք է եթե ոչ մանրամասն, ապա գոնե ընդհանուր պատկերացում ունենա իր օրգանիզմի, տարբեր օրգանների եւ համակարգերի կառուցվածքի ու գործառույթների, իր անհատականության ինդիվիդուալ-հոգեկան առանձնահատկության, իր դրության բարելավման միջոցների ու մեթոդների, իր ֆիզիկական ու մտավոր աշխատունակության մասին:

Ներկայումս բնակչության առողջության մակարդակով է որոշվում քաղաքակիրթ հասարակության զարգացածության մակարդակը, որը ԱՀԿ-ի խորհրդով քաղաքակիրթ երկրներում բնութագրվում է դեմոգրաֆիկ ցուցանիշներով. ծնելիության եւ մահացության (ընդհանուր, մանկական, նորածնային, մայրական), կյանքի տեւողության, ինչպես նաեւ ինֆեկցիոն հիվանդությունների, սննդային հյուծվածության եւ այլ ցուցանիշներով:

Թունավոր ամպը

Քիմիական գործարաններ մեզ մոտ էլ կան, եւ անուշադրության մատնել դրանց անվտանգության ամենաանշան թվացող նորմերն անգամ՝ աններելի ու անուղղելի սխալ է:

Իտալական փոքրիկ Սեւեսո քաղաքը 1976 թվականի հուլիսին սարսափելի աղետի զոհ դարձավ: Աղետը տեղի էր ունեցել տեղական քիմիական գործարանում: Մթնոլորտ էր արտանետվել թունավոր գազի մահաբեր ամպը:

Աղետից հետո Սեւեսոն քաղաք-ուրվական էր դարձել: Լքված ու մոռացված՝ այն սարսափ-ֆիլմի դեկորացիա է հիշեցնում: Երբեմնի կենդանի ու աշխույժ քաղաքը վերածվել է մեռյալ գոտու: Սեւեսոն անվանում են իտալական Հիրոսիմա:

Աղետը տեղի ունեցավ 1976 թվականի հուլիսի 10-ին: Շվեյցարական գործարանում պայթյունի հետեւանքով մթնոլորտ արտանետվեց դիոքսին թունավոր գազ: Այն մարդկությանը հայտնի ամենավտանգավոր ու մահաբեր թույնն է: Թունավոր ամպն աստիճանաբար սկսեց իջնել այգիների ու տների վրա:

Դիոքսինն օգտագործվում է տրիխնոֆենոլի արտադրության ժամանակ, որն անհրաժեշտ է օճառի պատրաստման համար: Եթե ջրի մեջ լուծենք այդ նյութի ընդամենը 90 մգ, ապա կբավարարի 8 մլն մարդ թունավորելու համար: Այդ ողբերգական օրը մթնոլորտ էր արտանետվել այնքան թույն, որ բավարար էր 100 մլն մարդ թունավորելու համար:

Առաջին նախանշանները

Աղետից առաջ Սեւեսոն 17 հազար բնակիչ ուներ: Փոքրիկ գեղատեսիլ քաղաքը, որը փռված էր Պո գետի հովտի կանաչ բլուրներին, գրավում էր բազմաթիվ զբոսաշրջիկների:

Այդ օրը քիմիական գործարանում գտնվող բանվորները հանկարծ լսեցին ուժեղ պայթյուն, որին հետեւեց սուլիչի ծակող ձայնը: Մի քանի րոպեում երկնքից՝ ձյան նման խիտ-խիտ թափվում էին քիմիկատի մասնիկները, օդը լցվեց քլորիի տհաճ հոտով: Բանվորները սառը ջրի ծորակներն ուղղեցին դեպի ռեակտորը, սակայն արդեն ձեւավորված մահաբեր ամպը շարժվեց դեպի քաղաք:



Աղետի պատճառները

Պայթյունից անմիջապես հետո գործարանի ադմինիստրացիայի ներկայացուցիչները փորձեցին պարզել վթարի պատճառները: Միակ վարկածը հետեւյալն էր. նախորդ մի քանի օրերին քիմիական ռեակցիայի ջերմաստիճանը նորմայից փոքր-ինչ բարձր էր եղել, իսկ սառեցման ռեժիմի հրահանգները չէին կատարվել:

Անվտանգության հիմնախնդիրը լուծելու համար նմանատիպ գործարաններն օգտագործում են ապահովիչ փականներ, որոնք վթարի դեպքում կլանում են մահացու թույնը՝ թույլ չտալով դուրս գալ մթնոլորտ: Սակայն Սեւեսոյում նման փականներ կամ չկային, կամ էլ տեղադրված էին կտուր տանող խողովակների վրա:

Վթարի պատճառը, փաստորեն, անվտանգության կանոնների անտեսումն էր:

Գաղտնի ինֆորմացիա

Կատարվածի ողբերգական հետեւանքները զգալի դարձան արդեն 3-4 օր անց: Չորեքշաբթի օրը Սեւեսոյի պոլիկլինիկաները լեփ-լեցուն էին հիվանդներով, որոնք արդեն մի քանի օր տառապում էին ցանից ու թարախապալարներից: Նրանք գանգատվում էին նաեւ մեջքի ու գլխի ցավերից, թուլությունից, սրտխառնոցից եւ տեսողության կտրուկ վատացումից:

Հիվանդները բժիշկներին պատմում էին նաեւ, որ իրենց տնային կենդանիներն ու թռչունները հանկարծակի սատկել են: Լոլիկի եւ եգիպտացորենի ցանքերը կարծես այրված լինեին, բույսերը չորացել էին ու կծկվել: Արոտավայրերում անասունների աչքերից ու ականջներից տարօրինակ հեղուկ էր հոսում:

Բժիշկներն ապշած էին, քանի որ տեղեկացված չէին վթարի ու դրա հնարավոր հետեւանքների մասին եւ ստիպված էին միայն ենթադրություններ անել: Տեղական լրատվամիջոցները լռում էին:

Եւ միայն մի քանի օր անց, երբ երեքամյա մի երեխա հիվանդանոց բերվեց բազմաթիվ թարախապալարներով ու բշտիկներով, Սեւեսոյի իշխանություններն անհանգստացան: Վերջիններս ստիպեցին գործարանի ղեկավարությանը բացատրություն տալ: Գործարանը հայտնեց միայն, որ խորհուրդ չի տալիս տեղական արտադրության սնունդ օգտագործել: Հայտարարությունը բնակչությանը հանգստացնելու փոխարեն խուճապ առաջացրեց:

Հիվանդների թիվն ավելանում էր, թռչունները սատկում էին արդեն երամներով, կենդանիները զանգվածաբար ոչնչանում էին՝ խմելով թունավորված ջուրը:

Մինչդեռ բժիշկները, ունեցած ինֆորմացիայի համաձայն, հիվանդներին բուժում էին տրիխլորֆենոլով թունավորումից, որը շատ ավելի թույլ թույն է, քան դիոքսինը:

Արտակարգ դրություն

Իտալիայի կառավարությունն արտակարգ դրություն հայտարարեց աղետից միայն 8 օր հետո: Առողջապահության նախարարության աշխատակիցները փորձում էին պարզել, թե դեպի ուր է շարժվել ամպը եւ որ շրջանները դեռեւս կարող են թունավորման վտանգի ենթարկվել:

Հուլիսի 24-ին իրականացվեց բնակչության տարհանում՝ «A» գոտուց: Այն շրջափակվեց փշալարերով: Մուտքը «A» գոտի խստիվ արգելվեց: Հատուկ ջոկատները ոչնչացրին կենդանիներին ու բույսերը:

Դեպքից երեք տարի անց երկրի պառլամենտն ամփոփեց աղետի հետաքննության արդյունքները: Պարզ դարձավ, որ գործարանը չէր պահպանել անվտանգության կանոնները եւ պարտավոր է տուժածներին 10 մլն դոլար վճարել՝ որպես փոխհատուցում:

Զարմանալի է այն փաստը, որ աղետին հաջորդած 20 տարիների ընթացքում Սեւեսոյի ոչ մի քաղաքացի չմահացավ: Անոմալիաներով մի քանի երեխա ծնվեց, սակայն պարզ չէ, արդյո՞ք դա աղետի հետեւանք է: Թունավորված 187 երեխաներից չհաջողվեց փրկել միայն երկուսին:

Հզոր համակարգիչն ամբողջությամբ նմանվում է մարդու ուղեղին եւ օգնում է հաղթահարել հիվանդությունները

Գիտնականները մտադիր են վերստեղծել մարդու ուղեղը՝ օգտագործելով աշխարհի ամենահզոր համակարգիչը, հայտնում է The Daily Mail-ը:

- Ակնկալվում է համախմբել մարդու ուղեղի կառուցվածքի մասին առկա բոլոր տվյալները եւ վերարտադրել դրանք մոնիտորի վրա, մանրագույն մասնիկների տեսքով՝ առանձին բջիջների եւ մոլեկուլների մակարդակով, - ասում է լրագրող Թամարա Քոհենը: Հնարավոր է, որ այդ մոդելը կօգնի հասկանալ Ալցհեյմերի եւ Պարկինսոնի հիվանդությունների պատճառները եւ թե ինչպես ենք մենք մտածում, որոշումներ կայացնում:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական տարբեր երկրների գիտնականների կողմից՝ Շվեյցարիայում բնակվող Հենրի Մարքրեմի ղեկավարությամբ: Հոդվածում նշվում է, որ գիտնականները հույս ունեն ծրագիրն ավարտել 12 տարում:

Այդ «ուղեղն» իրենից ներկայացնելու է հազարավոր եռաչափ պատկերներ, որոնք տեղադրված են լինելու կիսակլոր «ինքնաթռի խցիկի» շուրջը: Գիտնականները բառացիորեն կարողանալու են «թռչել» ուղեղի տարբեր հատվածների վրայով եւ հետեւել, թե ինչպես են դրանք համագործակցում միմիանց հետ: Նպատակը՝ մեկ տեղում հավաքել ամբողջ աշխարհի բոլոր նյարդաբանների հետազոտությունների արդյունքները: Ամեն տարի այս ոլորտում մոտ 60 հազար հոդված է հրատարակվում:

Ըստ լրագրողի, այդ ուղեղի մոդելը կարելի է օգտագործել նոր դեղերի փորձարկման համար, ինչպես նաեւ՝ բարձրացնել ռոբոտների եւ համակարգիչների ինտելեկտուալ մակարդակը:

- Սա մարդկությանը առաջարկված երեք ամենաբարդ հանձնարարություններից մեկն է. Բացահայտել երկիրը, տիեզերքն ու ուղեղը: Մենք պետք է հասկանանք, թե ինչն է մեզ մարդ դարձնում, - ասում է Մարքրեմը: Վերջին 15 տարիների ընթացքում նրա լաբորատորիայում ստեղծվել է կորտիկալ նյարդային փաթեթի համակարգչային մոդելը, որը կաթնասունների ուղեղի տարրերից մեկն է, ինչպես նաեւ՝ առնետի ուղեղի բաժիններից մեկը:

Հոդվածի հեղինակը նշում է, որ մարդու ուղեղի վերստեղծման հիմնական խնդիրներից մեկը էներգամատակարարումն է: Համակարգչին կպահանջվի մեկ ամբողջ ԱԷԿ-ի էներգիա:

Հումք տիեզերքից. միլիարդատերերը պատրաստվում են ուսումնասիրել երկնաքարը

«Այժմ գոյություն ունի միայն ընկերության անվանումը, հայտնի մենեջերների եւ հովանավորների ցուցակն ու մեկ հակիրճ հայտարարություն: Երեքշաբթի օրը Planetary Resources Inc. ընկերությունը Սիեթլում պատրաստվում է մանրամասն բացատրել, թե ինչպես կարելի կլինի ապագայում աշխարհը տիեզերքից ստացված հումքով մատակարարել», - հայտնում է Financial Times Deutschland-ը:



«Planetary Resources-ի հովանավորների եւ հիմնադիրների մեջ են այնպիսի միլիարդատերեր, ինչպիսիսք են Google-ի հիմնադիր Լարի Փեյջն ու Google-ի նախկին ղեկավար էրիկ Շմիդտը, Microsoft-ի նախքին ծրագրավորող Չարլզ Սիմոնին, X-Prize հիմնադրամի նախագահ Փիթեր Դիամանդիսը, ռեժիսոր Ջեյմս Քեմերոնն ու հայտնի շատ փորձագետներ», - գրում է հոդվածի հեղինակ Գերհարդ Հերմանը:

«Ապրիլ ամսվա սկզբում Կալիֆոռնիայի Կեկի համալսարանը, NASA-ի շատ գիտնականների օգնությամբ անցկացված մի ուսումնասիրություն ներկայացրեց, ըստ որի երկնաքարերն արդեն մինչեւ 2025 թվականը կարելի կլինի տեխնիկապես ղեկավարել եւ օգտագործել: Հնարավոր կլինի օգտագործել մինչը 7 մետր տրամագիծ ունեցող եւ 1000 տոննա կշռող երկնաքարեր: Ջրից, երկաթից, նիկելից եւ կոբալտից բացի, երկնաքարերից կարելի կլինի արդյունահանել նաեւ հազվադեպ քիմիական տարրեր», - նշվում է հոդվածում:

Ըստ Հեգմանի, հետազոտողներն առաջարկում են երկնաքարերը չտեղափոխել Երկիր, այլ ուղարկել դրանք Լուսնի ուղեծրի վրա, որտեղ օգտակար հանածոները կարտադրվեն տիեզերական սարքերի եւ ռոբոտների միջոցով: Ուսումնասիրությունների համաձայն, այդ ծրագրի իրագործումը կարող է 2.6 միլիարդ դոլար արժենալ, իսկ երկնաքարերի որսումն ու տեղափոխումը լուսնի արբանյակի վրա կտեւի 6-ից 10 տարի:

«Ակնհայտ է, որ երկնաքարերից հումք հանելու միտքը գիտական շրջանակներում տարբեր արձագանքներ կունենա: Օգտակար հանածոների արդյունաբերումը Լուսնի վրա շատ ավելի հեշտ կլինի: Լուսնի խառնարաններում կա ջուր եւ իզոտոպ հելիում-3, որը կիրառվում է նոր տիպի միջուկային ռեակտորներում», - ասում է հեղինակը:

արտակարգ ժամանց

Զվարճալի արտակարգ իրավիճակներ

Բջջային հեռախոսն ու օդանավը

Մի քանի տարի առաջ ավստրալական «Jetstar» ավիաընկերությանը պատկանող ինքնաթիռի օդաչուն վայրէջքի գնալու ժամանակ մոռանում է բացել օդանավի անիվները... բջջային հեռախոսով ստացված հաղորդագրության պատճառով:

2010 թ. մայիսին Սինգապուրի օդանավակայանում վայրէջք կատարելու ժամանակ Airbus A 320 օդանավը գետնից 150 մետր բարձրության վրա ստիպված է լինում ընդհատել վայրէջքը:

Պատահարի հանգամանքներն ուսումնասիրող հանձնաժողովը պարզում է, որ երբ երկրորդ օդաչուն սկսում է պատրաստվել վայրէջքի, առաջին օդաչուի բջջային հեռախոսի վրա սկսել են կարճ հաղորդագրություններ գալ: Վերջինս ուշադրությունը սեւեռում է իր հեռախոսին եւ չի լսում երկրորդ օդաչուի զգուշացումներն ու օդանավակայանի կարգավարի հրահանգները:

Ինչպես հետագայում բացատրում է օդաչուն՝ նա պարզապես մոռացել էր թռիչքից առաջ անջատել հեռախոսն ու որոշել էր դա անել թռիչքի ընթացքում: Մոտ 300 մետր բարձրության վրա երկրորդ օդաչուն սկսում է ստուգել ինքնաթիռի սարքավորումները եւ «զգում, որ ինչ-որ բան այն չէ»: Երբ նա փորձում է զգուշացնել ավագ ընկերոջը, վերջինս զբաղված է լինում իր հեռախոսով եւ ուշադրություն չի դարձնում նրա խոսքերին:

220 մետր բարձրության վրա սարքավորումն օդաչուներին ազդանշանով զգուշացնում է, որ օդանավի անիվներն իջեցված չեն: Առաջին օդաչուն փորձում է դրանք բացել, մինչդեռ երկրորդ օդաչուն կարծում է, թե նա կընդհատի վայրէջքն ու կաշխատի կրկին բարձրություն հավաքել:

Հետաքրքիր է, որ այդ ամբողջ ընթացքում օդանավի անձնակազմը նույնիսկ մի բառ չի փոխանակում: Ինքնաթիռը գնալով ավելի ու ավելի ներքեւ է իջնում, իսկ օդաչուն նույնիսկ չի էլ փորձում կարգավորել դրա դիրքը:

Վերջիվերջո, օդաչուները կարողանում են վեր բարձրացնել օդանավն ու օդում եւս մեկ պտույտ կատարելուց հետո նորմալ վայրէջք կատարում:

Հետաքննությունը վարող հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն ժամանակահատվածում, երբ օդանավը 850 մետր բարձրությունից իջնում է 300 մետրի, անձնակազմը չի կատարում օրենքով սահմանված հրահանգներից ոչ մեկը: Երկրորդ օդաչուի սխալ գործողությունները բացատրվում են հոգնածությամբ:

Հետաքրքիր է, որ սա ավստրալական ավիաընկերությունների հետ կապված նման միակ դեպքը չէ: 2009 թ. Սիդնեյի օդանավակայանում վայրէջք կատարելիս օդաչուները զգալիորեն ուշ են իջեցնում «Qantas» ընկերությանը պատկանող Boeing-767 ինքնաթիռի անիվները: Ավիաընկերության ներկայացուցիչը հայտարարում է, որ օդաչուները չեն կարողացել կողմնորոշվել, թե իրենցից ով պետք է բացի անիվները:

Խրախուսական մրցանակ

Բոլորովին վերջերս «Թալիբան» շարժման դաշտային հրամանատար, հայտնի ահաբեկիչ Մուհամեդ Աշանը հանձնվում է Աֆղանստանի իշխանություններին եւ... պահանջում, որ իրեն պարգեւատրեն դրա համար:

Ինչպես գրում է «Washington Post» թերթը՝ ահաբեկիչը, սեփական հետախուզման վերաբերյալ հայտարարությունը ձեռքին, գալիս է Պակտիկա շրջանի ոստիկանության հսկիչ անցակետ: Ինքնակամ ու մեղայականով ներկայանալու համար Մուհամեդը 100 ամերիկյան դոլար պարգեւատրություն է պահանջում:

Ոստիկանները ձերբակալում են ահաբեկչին եւ այդ մասին անմիջապես հայտնում իշխանություններին: Վերջիններս ապշում են իրադարձությունների նման արտառոց շրջադարձից:

Երբ ոստիկանության սպա Մեթյու Բեյքերը հարցնում է, թե արդյո՞ք դա իսկապես ինքն է, Աշանն անսպասելի ոգեւորությամբ պատասխանում է. «Այո, այո, իհարկե, դա ես եմ: Իսկ հիմա կարո՞ղ եմ ստանալ ինձ հասանելիք պարգեւը»:

Ավելի ուշ թալիբ ահաբեկչի ինքնությունը հաստատող ապացույցներ են ձեռք բերվում: Մուհամեդ Աշանին կասկածում էին Աֆղանստանի անվտանգության ուժերի վրա ամենաքիչը երկու հարձակում կազմակերպելու մեջ:

Շները նույնպես կրակում են

ԱՄՆ-ի Յութա նահանգում էլդերտերյեր ցեղատեսակի որսորդական շունը պատահաբար հրացանով կրակել է տիրոջ վրա:

Տեղի ոստիկանության տարածած հաղորդագրության մեջ ասվում է, որ գետի վրա որսորդություն անող 46-ամյա տղամարդը դուրս է գալիս ափ, իսկ նավակի մեջ մնացած շունը սկսում է անհանգստանալ ու նյարդայնացած ցատկոտել: Շունը պատահաբար թաթը դնում է նավակի հատակին ընկած հրացանի ձգանին, եւ այն կրակում է: Փամփուշտը դիպչում է որսորդի մարմնի ամենափափուկ մասին եւ տղամարդու կյանքի համար վտանգ չի ներկայացնում:

«The Daily Telegraph» թերթը գրում է, որ նմանատիպ մեկ այլ դեպք է գրանցվել Նոր Զելանդիայում՝ 2010 թ. ամռանը: Տեղացի 40-ամյա մի տղամարդ ընկերների հետ որոշում է ուղեւորվել վարազի որսի եւ հրացանը դնում է ավտոմեքենայի հետեւի նստատեղին: Նրա շունն անսպասելիորեն ցատկում է մեքենայի մեջ եւ դիպչում ձգանին: Լսվում է կրակոց եւ տղամարդու գոռոցը: Փամփուշտը, ծակելով դիմացի նստատեղի հենակը, կրկին խրվում է վայ-որսորդի մարմնի ամենափափուկ հատվածը:

2007 թ. ԱՄՆ-ի Այովա նահանգում որսորդական շունը բադերի որսի ժամանակ ցատկում է գետնին դրված հրացանի վրա ու «կրակում» տիրոջ ազդրին:

Նախորդ համարի խաչբառի պատասխանները

	Ա		Ս		Է		Տ	Ա	Ր	Ա	Ջ
Ս	Ր	Տ	Ա	Բ	Ա	Ց		Ղ		Լ	
	Տ	Ա	Փ	Ա	Կ		Ռ	Ա	Մ	Ի	Կ
Ք	Ե	Մ	Ո	Ն		Թ	Ա	Մ	Ա	Շ	Ա
	Մ	ՈՒ	Ր	Ա	Ջ		Բ	Ա	Յ	Ա	Ն
Պ	Ի	Կ		Կ	Ա	Լ	Ի	Ն	Ի	Ն	Ո
	Ս		Հ		Ռ	Ե	Ս		Ս		Ե
Ա		Բ	Ա	Վ	Ի	Ղ		Շ		Ջ	
Ս	Պ	Ա	Ս		Վ	Ա	Ղ	Ի	Ն	Ա	Կ
Տ		Վ	Ա	Ռ	Ե	Կ		Ճ	Ա	Վ	Ա
Ա	Ր	Ա	Ր		Լ		Դ	ՈՒ	Բ	Ա	Յ
Պ		Կ	Ա	Ճ		Վ		Կ	ՈՒ	Ր	Ս
Ա	Տ	Ա	Կ	Ա	Մ	Ա					Ր
Տ		Ն		Խ	Ո	Տ					ՈՒ
	Շ		Դ	Ա	Լ	Ի					Թ
Խ	Ա	Վ	Ա	Ր	Ա	Կ					Յ
	Ր		Յ	Ա	Ր	Ա					ՈՒ
Ա	Մ	Լ	Ի	Կ		Ն	Յ	ՈՒ	Տ	Ո	Ն



§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦ ß³µ³Ã³Ã»ñÃÇ ÑÇÙÝ³¹Çñ »ñ Ññ³ï³ñ³ÏÇã §²ñï³Ï³ñ·³ÉÇù¦ êäÀ

îÝûñ»Ý՝ ÜáõÝ» ¶ñÇ·áñù³Ý ¶ÉËª³ íáñ ËÙµ³·Çñ՝ ÜÇÏáÉ³ù ¶ñÇ·áñù³Ý

ÊÙµ³·ñÇ ï»Õ³Ï³É՝ ²í³. º÷ñ»ÙÙ³Ý Ò»ñ³íáñáÕ՝ Ì³ñ¹³Ý ¶³ëå³ñù³Ý

ºñ»ñ³Ý, äáõßÏÇÝÇ 25 Ð»é. 56 76 56, 24 24 22 E - mail: tert@emergency.am info@mes.am

îåª·ñí³Í ¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ Ññ³ï³ñ³ÏãáõÃù³Ý ïå³ñ³ÝáõÙ՝ ²ñß³ÏáõÝù³ó 2 Ì³í³ÉÁ՝ 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ ä³ïí»ñ՝435, ·ñ³ÝóÙ³Ý íÏ³ù³Ï³Ý՝1074, ïå³ù³Ý³ÏÁ՝5262 ûñÇÝ³Ï՝

Ստորագրված է տպագրության 26.4.2012 թ.